ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 27-Լ «17» 06 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԹԻՎ 01-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 01-Լ հրամանը:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.06.2019

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2019թ. հունիսի ___-ի N ___ -Լ հրաման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) իրավաբանական վարչությունը (այսուհետ՝ վարչություն) նախարարությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն անմիջականորեն հաշվետու է նախարարության գլխավոր քարտուղարին:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նորմատիվ ու իրավական այլ ակտերով, նախարարության և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում է Նախարարը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության նպատակներն են.

1) նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա մարմինների և գրասենյակների, ինչպես նաև նախարարության ենթակայության կազմակերպությունների միջև իրավական փոխհարաբերությունների օրինականության պահպանման և նրանց շահերի պաշտպանության ապահովումը.

2) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի համակարգի աշխատողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը.

3) նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա մարմինների և գրասենյակների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունների համակարգումը, և դրանց ընթացքի վերաբերյալ մասնագիտական վերլուծությունների ապահովումը.

4) իրավական կարգավորում պահանջող խնդիրներին սահմանված կարգով լուծումներ տալու աշխատանքների ապահովումը.

5) նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա մարմինների և գրասենյակների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի օրենսդրությանը համապատասխանության աշխատանքների վերահսկումը:

5. Վարչության խնդիրներն են.

1) նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա մարմինների և գրասենյակների իրավական աշխատանքների համակարգումը.

2) կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործումը.

3) նախարարությունում իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրության համակարգումը և դրանց ընթացքի վերաբերյալ մասնագիտական վերլուծությունների կատարումը.

4) կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակա մարմինների և գրասենյակների հետ համատեղ նախարարության համակարգում օրինականության պահպանմանն ուղղված միջոցառումներ մշակումը և իրականացումը, ինչպես նաև նախարարության աշխատանքային ներքին կարգապահական կանոնների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակմանն ու իրականացմանը գործուն մասնակցություն ցուցաբերելը.

5) նախարարությունում մշակվող օրենքների նախագծերի, հրամանների հրահանգների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը, նորմատիվ ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական փորձագիտական եզրակացությունների ներկայացումը.

6) բարձրագույն, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

7) ՀՀ կառավարությունից, ՀՀ նախարարություններից, ինչպես նաև պետական ու հասարակական այլ կազմակերպություններից ստացված գրություններին, քաղաքացիներից ստացված դիմումներին պատասխանելը.

8) մեթոդական աջակցություն տրամադրելը.

9) նախարարի հաստատմանը ներկայացվող հրամանների, հրահանգների, կանոնադրությունների, կանոնակարգերի և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման նկատմամբ հսկողություն իրականացնելը՝ դրանք օրենքների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով.

10) սահմանված կարգով նախարարության շահերը դատարանում, ինչպես նաև այլ մարմիններում ներկայացնելը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները.

1) փաստաթղթերի ուսումնասիրման և դատական գործերի բաժին,

2) օրենսդրության բաժին:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունը իրականացնում է հետևյալ գործառույթները՝ ըստ բաժինների.

1) փաստաթղթերի ուսումնասիրման և դատական գործերի բաժինը՝

ա. սահմանված կարգով իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգման աշխատանքներ.

բ. իրականացնում է քաղաքացիների ընդունելության կազմակերպում և ապահովում է նախարարություն ներկայացված դիմումների, բողոքների, առաջարկությունների և այլ գրությունների վերաբերյալ իրավական եզրակացությունների տրամադրումը.

գ. խորհրդատվություն է տրամադրում կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտի իրավական կարգավորում պահանջող հարցերի վերաբերյալ.

դ. նախարարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական, մշակութային և սպորտային հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

ե. անհրաժեշտության դեպքում հրավիրում է խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

զ. տարբեր դատական ատյաններում ապահովում է նախարարության ներկայացուցչությունը, իրականացնում է նախարարության շահերի պաշտպանությունը.

է. նախարարության անունից, համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով կնքում է պայմանագրեր ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ.

ը. իրականացնում է վարչական վարույթներ.

թ. իրականացնում է հարկադիր կատարման ծառայության հետ կապված աշխատանքների կազմակերպումը.

2) օրենսդրության բաժինը՝

ա. իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներ.

բ. նախապատրաստում է նախարարության առջև դրված նպատակներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ և այլ փաստաթղթեր, ինչպես նաև մշակում է դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ.

գ. սահմանված կարգով իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման աշխատանքներ.

դ. սահմանված կարգով իրականացնում է զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման, դրանց մոնիթորինգի և գնահատման աշխատանքներ.

ե. իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակման և դրանց իրականացման կազմակերպման աշխատանքներ.

զ. սահմանված կարգով իրականացնում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակում ու քննարկում.

է. իրականացնում է կրթության, մշակույթի և սպորտի զարգացման պետական ծրագրերի մշակում և դրանց համակարգման աշխատանքներ.

ը. իրականացնում է պետական ռազմավարական ծրագրերի շրջանակներում կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների ծրագրերի կազմակերպում և մոնիթորինգի աշխատանքներ.

թ. պատասխանում է քաղաքացիների դիմումներին.

ժ. նախարարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական, մշակութային և սպորտային

հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար:

ժա. անհրաժեշտության դեպքում հրավիրում է խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

8. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է վարչության պետը, ով անմիջական հաշվետու է նախարարին, և պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

9. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում են բաժնի պետերը:

10. Վարչության պետը, բաժինների պետերը և աշխատողները քաղաքացիական ծառայողներ են:

11. Վարչության պետի, բաժինների պետերի և աշխատողների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են օրենքով սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով (աշխատատեղի նկարագրով):